ARMENIA
2021-2041
ideas in action

Հայաստան
2021-2041

Ակնարկ

Սեպտեմբեր, 2021 թ.

Համառոտագիր

Վերջին 10-15 տարիների ընթացքում Հայաստանի մակրոպարամետրերը (օրինակ՝ ՀՆԱ ԲՏԱՏ (CAGR)՝ ~6%) աճել են գլոբալ և տարածաշրջանային միտումներին համապատասխան, ինչը հնարավորություն չի տվել երկրին բեկում մտցնել՝ հաշվի առնելով մեկնարկային ցածր ելակետը:

Ավելին, տնտեսական աճը խթանելու համար սպառողական ծախսերին չափից ավելի ապավինելը չի կարող կայուն և բավարար լինել ապագայում: Կայունության խթանման համար անհրաժեշտ է անդրադառնալ երեք հիմնական լծակներին՝

- Բարելավել արտաքին առևտրի հաշվեկշիռը՝ ապրանքների և ծառայությունների զուտ արտահանող դառնալով,
- Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելը (մարդկային կապիտալ),
- Խոշոր ներդրումներ ներգրավելը (օրինակ՝ ենթակառուցվածքների համար):

Վերոնշյալ լծակներին անդրադառնալու (ա), գլոբալ միտումների և առանցքային տեղաշարժերի հետ կապված հնարավորությունների (բ), ինչպես նաև հաջողված փոքր տնտեսություններից քաղված դասերի հիման վրա (գ) առանձնացվել են տնտեսության հետևյալ առաջնահերթ ոլորտները՝

- **Գյուղատնտեսություն**. արտահանման ծավալները կարող են 5 անգամ ավելանալ՝ համաձայն այն տվյալների՝ ըստ որոնց արտադրանքը կարող է աճել բերքատվության բարելավմամբ (օրինակ՝ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ) և հողօգտագործմամբ,
- **Կրթությունը** երկրում երկակի դեր է կատարում. առաջինը՝ տվյալները փաստում են, որ առկա են ՀՆԱ-ում դրա կշիռը մեծացնելու հնարավորություններ (օրինակ՝ օտարերկրյա ուսանողների ներգրավում) և երկրորդը՝ մարդկային կապիտալի որակը պետք է բարելավել բոլոր ոլորտների համար,
- **Առողջապահությունը** նույնպես երկակի դեր է կատարում: Միտումներն ու տվյալները ցույց են տալիս, որ հայերի կյանքի տևողությունը ու որակը կարող են բարելավվել՝ նոր տեխնոլոգիաների (օրինակ՝ հեռաբժշկություն) ներմուծմամբ և առաջնային խնամքի հետագա զարգացմամբ՝ և՛ որակի բարձրացման և՛ ծախսերի նվազեցման նպատակով,
- **Բարձր տեխնոլոգիաներ**. առկա է արտադրանքի ծավալը 4 անգամ ավելացնելու ներուժ՝ շեշտը դնելով արտահանման վրա: Հետագա բարելավման համար անհրաժեշտ է աշխատանքի արտադրողականության արագ աճ և աշխատուժի աճ. ողջ ներուժին հասնելու համար կրթական համակարգը պետք է պատրաստի ամենամեծ պահանջարկ ունեցող բարձրակարգ մասնագետներ,
- **Զբոսաշրջություն**. տվյալներն ու միտումները ցույց են տալիս, որ Հայաստանի զբոսաշրջության ոլորտը կարող է 3-8 անգամ ավել եկամուտ ապահովել, սակայն այն պահանջում է որոշակի ուղղությունների վրա կենտրոնացում (օրինակ՝ ուղիղ չվերթներ, նպատակային մարքեթինգ ընտրված տարածաշրջաններում և երկրներում):

Կենտրոնանալով հիմնականում այս ոլորտների վրա դրանց ողջ ներուժը բացահայտելու նպատակով հնարավոր է 10 անգամ ավելացնել դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ում հետագա 20 տարիների ընթացքում: Բացի այդ, երկրում պետք է զարգացնել և ներգրավել իրականացման կարողություններ: Ճիշտ նախագծերի և գաղափարների բացահայտմանը պետք է հաջորդի դրանց դասակարգումն ըստ առաջնահերթությունների. դրանք պետք է իրականացվեն համապատասխան կադրերի, գործընթացների և կառավարման միջոցով:

Այս լայն տեսլականը հնարավոր դարձնելու և իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ կադրերի հստակ աղբյուրը հայկական սփյուռքն է: Այս նպատակով պետք է մշակվեն սփյուռքի ներգրավման նոր մեխանիզմներ:

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ

Իրականացման ճանապարհային քարտեզ

Վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանի տնտեսությունն աճել է տարեկան ~6%-ով, որը բավարար չի եղել թռիչքային զարգացման համար

ARMENIA 2021-2041 ideas in action

ՀՆԱ մեկ շնչի հաշվով ԳՊ աճ, 2004 թվականի ցուցանիշը



ԲՏԱՏ (CAGR), տոկոս	04–'19
Ադրբեջան	+7.2%
Վրաստան	+6.4%
Հայաստան	+5.9 %
ՆՍՄ[1]	+4.4%
Արևելյան Եվրոպա[2]	+4.0 %
Աշխարհ	+3.1%

1. Նախկին Սովետական միություն, 2 Արևելյան Եվրոպան կազմված է Բուլղարիայից, Ռումինիայից, Խորվաթիայից և Ալբանիայից

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ

Առանցքային հետևություններ

Հայաստանը զարգացել է ավելի արագ, քան նախկին Սովետական միության շատ այլ երկրներ

Այնուամենայնիվ, **տարածաշրջանի հարևան երկրներն ավելի արագ են զարգացել**, քան Հայաստանը

Ցածր մեկնարկային բազայի պատճառով Հայաստանի աճը բավարար չի եղել նմանատիպ երկրների համեմատ իր դիրքը էապես բարելավելու համար



Հայաստանը 2003 թվականի համեմատ փոխեց դիրքը՝ 10րդ-ից դառնալով 9-րդը

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ

Առանցքային հետևություններ

Չնայած Հայաստանի աճի տեմպերին՝ նրա **ցածր մեկնարկային բազան երկրին հնարավորություն չի տվել էապես բարելավել իր դիրքերը**՝ ՆՍՄ նմանատիպ երկրների համեմատ

Հայաստանը պետք է ձգտի արագացնել իր զարգացումը Արևելյան Եվրոպայի երկրների՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակին հասնելու համար

Որոշակի գործոններ սահմանափակել են Հայաստանի հետագա աճը

Հայաստանի ՀՆԱ աճի խթանները, մլրդ. ԱՄՆ դոլար (առանց գնաճի հաշվարկման)



Աղբյուր՝ Համաշխարհային բանկ

ARMENIA 2021-2041 ideas in action

1 Աճի անկայուն շարժիչներ
Աճի հիմնական շարժիչը եղել են սպառողական ծախսերը, պայմանավորված տնային տնտեսությունների պարտքի ավելացմամբ

2 Ներմուծումը գերազանցում է արտահանմանը
Երկրի արտահանման ծավալը աճում է ավելի արագ, քան ներմուծմանը, սակայն բավարար չէ դրան գերազանցելու համար

3 Ներդրումների պակաս
Իր նման այլ երկրների համեմատ Հայաստանը ՀՆԱ-ում ունի ներդրման ցածր տեսակարար կշիռ, իսկ վերջին տասնամյակում ներդրումների աճը կանգ է առել

4 Աշխատանքի ցածր արտադրողականություն
Չնայած արտադրողականությունն աճել է՝ այն իր նման այլ երկրների մակարդակից ցածր է ու շարունակում է խոչընդոտել Հայաստանի տնտեսական աճին

Այս երեք մարտահրավերներին անդրադառնալը նախ կարող է նպաստել միջնաժամկետ-երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի ներուժը բացահայտմանը

Հիմնվելով երեք ոսպնյակների վրա՝ առանձնացվել են տնտեսության ոլորտների առաջնահերթությունները հետագա մանրամասն վերլուծության համար



1

Արտահանման և ներդրումների՝ արտադրողականությունը բարձրացնելու ներուժն ու հնարավորությունը

Տնտեսության ներկա վիճակի և վերջին դինամիկայի վերլուծություն, արտադրողականության բարելավման համար ուժեղ կողմերի ու հնարավորությունների, արտահանման և ներդրումների ներուժի բացահայտում

2

Հաջողված փոքր տնտեսություններից վերցված դասեր

Հաջողված փոքր տնտեսությունների, դրանց ռազմավարական առաջնահերթությունների և հիմնական մոդելների (archetype) վերլուծություն

3

Ապագայահեն հայացք, որը հիմնված է համաշխարհային միտումների և հնարավոր խափանումների վրա

Հասկանալ համաշխարհային տնտեսության մեջ առանցքային տեղաշարժերն ու փոփոխությունները

Առանձնացվել են հինգ առաջնային ոլորտներ, որոնք կնպաստեն Հայաստանի առաջանցիկ աճին

ԵՐԵՔ ՈՍՊՆՅԱԿՆԵՐ

1 Արտահանման և ներդրումների՝ արտադրողականությունը բարձրացնելու ներուժն ու հնարավորությունը



2 Հաջողված փոքր տնտեսություններից վերցված դասեր

3 Ապագայահեն հայացք, որը հիմնված է միջազգային միտումների և հնարավոր խափանումների վրա

ՀԻՆԳ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈԼՈՐՏՆԵՐ

Ա Գյուղատնտեսություն

Բ Կրթություն

Գ Առողջապահություն

Դ Բարձր տեխնոլոգիաներ

Ե Զբոսաշրջություն

Ոլորտների և ենթա-ոլորտների համապարփակ փաթեթը վերլուծվել է Հայաստանի 2041 թվականի տեսլականի համար՝ գերակա 5 առաջնային ոլորտները սահմանելու նպատակով

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ. գյուղատնտեսություն

Իրականացման ճանապարհային քարտեզ

2041 թվականի տեսլականը Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի համար. Երկրում պարենային անվտանգության ապահովում և առևտրային արժեքի օպտիմալացում

ARMENIA 2021-2041 ideas in action

2020 **$1.5** → 2031 **$2.4** → 2041 **$3.5 մլրդ**

Գյուղատնտեսության ոլորտի համախառն արտադրանքի թիրախը 2041 թվականի համար

	2031		2041	
	233	→	**91 հազ.**	Անհրաժեշտ աշխատուժ
	$0.5	→	**$2.4 մլրդ**	Արտահանման թիրախ

Պարենային անվտանգություն

100%

Ինքնաբավությունը կարևոր հացահատիկային արտադրանքների և անասնապահական ծագման մթերքների ոլորտում

- Ցորեն
- Կարտոֆիլ
- Անասնակեր (եգիպտացորեն, վարսակ, գարի)
- Թռչնամիս
- Խոզի միս

Արտահանման գերազանցություն

x5

Գյուղատնտեսական ապրանքների արտահանման ներուժի աճ՝ հետևյալ արտադրանքների և առևտրային գործընկերների վրա կենտրոնանալով

- Միրգ և բանջարեղեն
- Ծխախոտ
- Կաթնամթերք (կաթ, պանիր)
- Գինի
- Միս (խոշոր եղջերավոր անասուններ, խոզ, գառ)
- Ոգելից խմիչքներ

Պետք է հաշվի առնվեն արժեքային շղթայի 5 ուղղությունները՝ հասկանալու, թե ինչպես զարգացնել Հայաստանի գյուղատնտեսության ոլորտը

ARMENIA 2021-2041 ideas in action

Գյուղատնտեսության արժեքային շղթա

- Առաջնային արտադրանք (սերմեր, քիմիկատներ)
- Առաջնային արտադրանքի բաշխում
- Հողագործություն
- Վերամշակում
- Հավաքագրում և պահուստավորում
- Վաճառք և արտահանում

Ուղղություններ

1. Կադրեր և տաղանդներ

Ապահովել գյուղատնտեսության ոլորտում աշխատող մարդկանց արդյունավետությունը, որակավորումը և փորձառությունը

2. Ենթակառուցվածք

Բարելավել առկա ենթակառուցվածքները (ոռոգման համակարգ, մեքենաներ, ճանապարհներ և պահեստներ)՝ գյուղատնտեսական արտադրությունը խթանելու համար

3. Տեխնոլոգիա և նորարարություն

Օգտագործել թվային և վերլուծական կարողությունները, բիոտեխնոլոգիական ձեռքբերումները և գերժամանակակից սարքակազմը՝ գյուղատնտեսական արտադրողականությունը բարելավելու համար

4. Էկոհամակարգ

Ձևավորել իրավական միջավայր և փորձի փոխանակման համայնքներ՝ հողագործությունը խթանելու համար

5. Կապիտալ և ներդրումներ

Ընդլայնել ֆինանսների և ռեսուրսների հասանելիությունը նոր ձեռնարկությունների ստեղծման և զարգացման համար

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման խթանները

ՈՉ ՍՊԱՌԻՉ
ARMENIA 2021-2041
ideas in action

Պակաս կարևոր — Առավել կարևոր

Ուղղություններ	Առաջնային արտադրանք(սերմեր, քիմիկատներ, սննդանյութեր)	Արտադրանքի բաշխում	Հողագործություն	Վերամշակում	Հավաքագրում և պահուստավորում	Վաճառք և արտահանում
1 Կադրեր և տաղանդներ	Փորձառությունը քիմիայի, բիոտեխնոլոգիայի և գյուղտեխնոլոգիայի ոլորտում անհրաժեշտ առաջնային արտադրանք ստանալու համար		Տնային տնտեսություն և ՓՄՁ հողագործություն **Աշխատուժի որակավորում**			
2 Ենթակառուց-վածքներ	**Ներկրված կամ ներքին արտադրության առաջնային արտադրանքի հեշտ հասանելիություն**	**Ճանապարհներ**	Մեքենաներ **Ոռոգման համակարգեր**	Վերամշակման սարքավորումներ	Սառնարանային պահեստներ Պահեստներ	
3 Տեխնոլոգիա և նորարարություն		Երթուղու օպտիմալացում և հետագծում	**Թվային գործիքներ, կանխատեսող վերլուծություն, առաջադեմ սարքավորումներ (անօդաչու թռչող սարքեր, սենսորներ և ռոբոտներ)**			Էլեկտրոնային շուկայի հարթակներ՝ արտադրողներին PGC-ներին և մանրածախ առևտրով զբաղվողներին միացնելու համար
4 Էկոհամակարգ	Հետազոտական լաբորատորիաներ և տնկարաններ, որոնք համապատասխանեցնում և փոփոխում են սերտիֆիկացված սերմերը և տնկիները	Գյուղատնտեսության մասին օրենք (հողի և ներդրանքի օգտագործման մասին օրենսդրություն), գյուղատնտեսության մասին ՓՄՁ կարգավորումներ	**Փորձառության փոխանակում և գյուղատնտեսական աքսելերատորներ**			
5 Կապիտալ և ներդրումներ	Ներդրում առաջնային արտադրանքի հետազոտության և զարգացման համար (R&D)		**Ֆինանսավորման հասանելիություն մասնավոր տնային տնտեսությունների և ՓՄՁ հողագործների համար** Հողային բանկեր (Land Banks)			

Վեց ռազմավարական քայլեր գյուղատնտեսության ոլորտում, որոնք Հայաստանը պետք է հաշվի առնի

ARMENIA 2021-2041 ideas in action

Գերակա նախաձեռ-նություններ

Ցանքատարածությունների վերամշակում. ընդլայնել հողօգտագործումը համախմբման արտոնությունների միջոցով՝ արտադրությունը խթանելու համար

Կենտրոնացում կարևոր արտադրանքների արտադրության վրա. ապահովել ինքնաբավությունը և պարենային անվտանգությունը (օրինակ՝ հացահատիկի, կերերի, կենդանական սպիտակուցների համար)

Արտահանման ընդլայնում. մրգի, ծխախոտային արտադրանքների և գինու նպատակային արտահանումը թիրախային երկրներ (օրինակ՝ Ռուսաստան, Ուկրաինա, ՄԱԷ, Սաուդյան Արաբիա)

Ոլորտին բնորոշ խթաններ

Առաջադեմ սերմերի, գյուղտեխնոլոգիայի կիրառում. օրինակ՝ մանրէային պարարտանյութի օգտագործումն ազոտը ֆիքսելու, արտադրողականությունը խթանելու համար

Գյուղատնտեսական հաբերի ստեղծում. կրթել և աջակցել հողագործներին գյուղատնտեսության ժամանակակից տեխնոլոգիաների (օրինակ՝ ծածկող մշակաբույսերի (cover crops)), արդյունաբերականացման և արտադրության առևտրայնացման մասով

Երկրի ողջ տարածքով մեկ ոռոգման համակարգերի ստեղծում. կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպես օրինակ՝ կաթիլային ոռոգումը՝ ջրօգտագործման արդյունավետությունը բարելավելու համար

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ. Կրթություն

Իրականացման ճանապարհային քարտեզ

Բ 2041 թվականի տեսլականը Հայաստանի կրթության ոլորտի համար. Համապատասխանեցում ազգային առաջնահերթություններին և հասանելիության ու որակի բարելավում

ARMENIA 2021-2041 ideas in action

x3 Տարեկան կրթության ուղղակի ներդրումը ՀՆԱ-ում մինչ 2041 թվականը

	2021		2041
	5	→	**15 հազ.**
	0	→	**6**

Օտարերկրյա ուսանողներ Հայաստանում

Հայաստանի համալսարանները աշխարհի 1000 լավագույն համալսարանների ցանկում

Համապատասխանեցումը ազգային առաջնահերթություններին

- Ամբողջությամբ **բացահայտել** կադրերի ներուժը **և զարգացնել**
- **Խթանել Հայաստանի արտադրողականության աճը և մրցունակությունը**՝ շեշտը դնելով առաջնահերթ ոլորտների համար կադրերի զարգացման վրա
- **Ներգրավել ավելի շատ միջազգային ուսանողներ**՝ գլոբալ հեղինակությունն ընդլայնելու և ֆինանսավորումը մեծացնելու համար

Կրթության բարելավված հասանելիություն և որակ

- Հայաստանի բոլոր շրջաններում ապահովել **բարձրակարգ կրթության հավասար հասանելիություն**
- **Կրթության ոլորտում կարիերան** դարձնել ավելի գրավիչ և ազդեցիկ
- Շեշտը դնել **նախադպրոցական կրթության զարգացման** վրա
- **Բոլոր շրջաններում** ստեղծել **ԳՏՃՄ (STEM) կրթական և ստեղծարար հաբեր**

Բ Պետք է ուսումնասիրվեն ուսուցման 5 փուլերի բազմաթիվ ուղղություններ՝ հասկանալու, թե ինչպես զարգացնել Հայաստանի կրթության ոլորտը

ARMENIA 2021-2041 ideas in action

Վաղ մանկություն · Մ-12 · ԱՄՄԿ · Բարձրագույն կրթություն · Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում

0 · 6 · 12 · 16 · 18 · 22 · 25 · Բնորոշ տարիքը

Ուսուցման փուլերը

1 Վաղ մանկական կրթություն (ՎՄԿԽ)

2 Տարրական և միջնակարգ դպրոցներ (Մ-12[1])

3 Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն (ԱՄՄԳ)

4 Բարձրագույն կրթություն

5 Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում

Ուղղությունները

Հասանելիություն

Արդյո՞ք սովորողներն ունեն առաջարկի պատշաճ հասանելիություն

Որակ

Որո՞նք են ենթաոլորտի ուսումնառության կամ աշխատաշուկայի արդյունքները

Խթաններ

Ֆինանսական կայունություն

Որքա՞ն է կազմում առաքման ծախսը, այդ թվում արդյունքների հետ կապված ծախսերը

Փորձ

Արդյո՞ք մենք ունենք բարելավված բարեկեցություն և բավարարվածություն, և արդյո՞ք առկա են կրթության նորարական մոտեցումներ

Կառավարում

Որո՞նք են հիմնական շահագրգիռ կողմերի շահերը և ինչպե՞ս պետք է դրանք համապատասխանեցնել կառավարման գործող կառուցվածքում

1. Կ-12-ը «Մանկապարտեզից 12-րդ դասարան» արտահայտության հապավումն է

Բ Հայաստանում կրթական համակարգի զարգացման հիմնական մարտահրավերները

ARMENIA 2021-2041 ideas in action

Պակաս կարևոր ☐ ☐ ☐ Առավել կարևոր

Ուսուցման փուլ	Հասանելիություն	Որակ	Խթաններ
1 Նախակրթական (ՎՄԿԽ)	Ընդունելության ցածր մակարդակ	**Հասանելիություն և մատչելիության գյուղական և հեռավոր շրջաններում** Ժամանակակից կրթություն տրամադրող դպրոցների թվի աճ **Դպրոցների աշխարհագրական տեղակայումը բնակչության բաշխմանը համապատասխան** **Բարելավված հասանելիություն գյուղական և հեռավոր շրջաններում** **ԳՏՃՄ(STEM) մասնագետների առաջարկի ավելացում** Բարձրագույն կրթության արժեքեի բարձրացում	**ՎՄԿԽ-ն պատշաճ նախապատրաստում է դպրոցի համար** Որակի մոնիթորինգի բարձրակարգ գործիքների կիրառվում ուսուցիչներին և աշակերտների հմտությունները գնահատելու համար Ձեռքբերումների գնահատումը միջազգային վարկանիշներով **Ուսումնական ծրագրերի համապատասխանեցում գործատուների ակնկալիքներն և կրթության գլոբալ միտումներին** Ուսուցիչների որակի գնահատում Ուսանողների՝ միջինից ցածր առաջադիմությունը ՄԲՄՄՈՒ-ում **Ուսուցիչների որակի բարելավում դասընթացների միջոցով** **ԱՄՄԳ (TVET) բարձրակարգ կրթության ապահովում** **Կրթության միջին որակի բարելավում** Հայաստանի համալսարանների վարկանիշների բարելավում Գործազրկության մակարդակի նվազեցում կրթված անձանց շրջանում	Մասնավոր հաստատությունների զարգացման պայմաններ և արտոնություններ ՎՄԽԿ-ն որպես առաջնահերթություն Կենտրոնացում ԱՄՄԳ-ի վրա Բավարար ներդրումներ կրթության ոլորտում Կառավարության կկենտրոնացում բարձրագույն կրթության վրա Խրախուսման համակարգեր ուսուցիչների և դասախոսների համար Ուսանողների, ուսումնական հաստատություն-ների և առհասարակ կրթության նպատակի հստակ օրինակելի մոդելի սահմանում Կրթության ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության հստակ կարգավորող շրջանակի սահմանում
2 Տարրական (Մ-12)			
3 Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն (ԱՄՄԳ)			
4 Բարձրագույն կրթություն			
5 Ցկյանքս ուսումնառություն	Վերապատրաստման կարևորության մասին իրազեկվածության ընդլայնում Վերապատրաստման ծրագրերի խթանում (այդ թվում՝ պետական ֆինանսավորմամբ)		

1. ՄԲՄՄՈՒ-ն (Մաթեմատիկայի և Բնագիտության միջազգային միտումների ուսումնասիրություն) ամբողջ աշխարհում ուսանողների մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների միջազգային գնահատումների շարք է

Բ Յոթ ռազմավարական քայլեր կրթության ոլորտում, որոնք Հայաստանը պետք է հաշվի առնի

ARMENIA 2021-2041 ideas in action

Վաղ մանկություն · Մ-12 · ԱՄՄԿ · Բարձրագույն կրթություն · Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում

Լավագույն փորձառությամբ երկրներ

Գերակա նախաձեռ-նություններ

- **Վաղ մանկական կրթության ընդլայնում**
- **Դպրոցի ղեկավարության և ուսուցիչների շարունակական զարգացում**
- **Որակավորման բարձրացման կենտրոնների զարգացում Մ-12-ում**
- **Կրթության համապատասխանեցումն աշխատաշուկայի ապագա կարիքներին (այդ թվում կենտրոնացում ԳՏՃՄ վրա)**
- **Ողջ կյանքի ուսումնառության ծրագրերի ընդլայնում**

Ոլորտին բնորոշ խթաններ

- **Թվային խթանների և հեռավար ուսուցման զարգացում**
- **Մեծացնել կրթության ոլորտում կարիերայի գրավչությունը** և՛ ֆինանսական և՛ ոչ ֆինանսական լծակներով

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ. Առողջապահություն

Իրականացման ճանապարհային քարտեզ

2041 թվականի տեսլականը Հայաստանի առողջապահության ոլորտի համար. Կանխարգելիչ դեղորայք, թվայնացում և բարձրակարգ խնամք բոլորի համար

ARMENIA 2021-2041 ideas in action

75 → 80 տարի Կյանքի միջին տևողությունը ծննդյան պահին Հայաստանում մինչ 2041 թ.

Կանխարգելիչ դեղորայք

- **Հիվանդության կանխարգելման և վաղ հայտնաբերման վրա կենտրոնացում՝** հիվանդության ավանդական բուժման փոխարեն
- **Ամբողջությամբ անդրադառնալ վարքագծային ռիսկերին** (օրինակ՝ ծխելուն, խմելուն)՝ կրթության և կանխարգելիչ միջամտությունների միջոցով
- **Ապահովել բարձրակարգ խնամքի հավասար հասանելիություն** Հայաստանի բոլոր քաղաքացիների համար

Թվայնացում և բարձրակարգ խնամք

- **Առողջապահության համակարգն ամբողջովին թվայնացնելու հնարավորություն՝** հիվանդների փոխգործակցությունը, խնամքի տրամադրումն ու մոնիթորինգն արդյունավետ դարձնելու համար
- **Ապահովել առողջապահության ոլորտի կադրերի զարգացումն ու տեղաբաշխումն** ամբողջ երկրում
- **Խթանել** առողջապահական համակարգերի **ամբողջական վերափոխումը՝** բարձր որակն առանց գների զգալի աճի ապահովելու համար

Գ COVID-19-ը հանգեցրել է փոփոխությունների, որոնք կարող են օգտագործվել առողջապահական համակարգում նաև ապագայում

COVID-19-ի ճգնաժամը լարվածություն է առաջացրել շատ երկրների, այդ թվում Հայաստանի **առողջապահական համակարգում**

Այս լարվածությունը հանգեցրել է **առողջապահական համակարգի հիմնական լծակների փոփոխությունների կտրուկ աճին**, որոնք նախկինում դիտարկվել են որպես կարևոր, սակայն ոչ հրատապ, կամ դժվար մասշտաբավորվող

COVID-19-ի ընթացքում բացահայտված հիմնական փոփոխությունները, որոնք տարածման դեպքում կարող են ամրապնդել Հայաստանի առողջապահության համակարգերը

Կայուն հանրային առողջապահական համակարգերի կարևորության և կանխարգելման կարևորման աճող ընկալում

Նորարարությունների արագացված **ներմուծում թվային** և վերլուծահեն լուծումներում

Անձնակազմի տեղակայման և ակտիվների օգտագործման բարձր **ճկունության**

ՀԶ (R&D) և տարածման արագացված գործընթաց, օրինակ՝ փորձարկում, պատվաստանյութի ներարկում

Խնամքի լավագույն փորձառության ուղիների արագ որդեգրում

4 Հասկանալու համար, թե ինչպես զարգացնել Հայաստանի առողջապահական ոլորտը անհրաժեշտ է արժեքային շղթայում ուսումնասիրել բազմաթիվ ուղղություններ

ARMENIA 2021-2041 ideas in action

Առողջապահության ոլորտի արժեքային շղթա

1 Առողջ ապրելակերպ

Վարքագծային ռիսկերի կրճատում և ակտիվ ու առողջ ապրելակերպի զարգացում

2 Կանխարգելիչ խնամք

Կանոնավոր ստուգումներ, սկրինինգի ծրագրեր, պատվաստում

3 Ախտորոշում

Հիվանդությունների ճշգրիտ ախտորոշում ախտանիշների և թեստերի միջոցով

Էլեկտրոնային առողջապահության համակարգի դիագնոստիկա

4 Թերապիա և բուժում

Թերապիա, այդ թվում հոսպիտալացում. բուժում, վիրահատություններ, մոնիթորինգ

5 Երկարաժամկետ խնամք և ռեաբիլիտացիա

Աջակցության տրամադրում քրոնիկ հիվանդություններ կամ հաշմանդամություն ունեցող մարդկանց, վերականգնողական ծրագրեր

Ուղղություններ

Խնամքի որակը

Առողջ վարքագիծ և մտածելակերպ

Բժիշկների և բուժքույրերի որակը

Բուժկրթական ծրագրեր

Սարքավորումների որակը բուժհաստատություններում

Խնամքի մատչելիությունը

Հիվանդանոցների և բժշկական կենտրոնների բաշխվածությունն ու մատչելիությունը

Բժիշկների և բուժքույրերի թիվը

Բժշկական սարքավորումների բաշխվածությունն ու հասանելիությունը

Խթանները

Տեխնոլոգիա և նորարարություն

Կլինիկական առաջընթաց

Առողջապահության թվային տվյալների հավաքագրում

Էլեկտրոնային առողջապահության հասանելիություն

Էկոհամակարգ

Համագործակցություն շահագրգիռ կողմի հետ

Կարգավորումներ

Ֆինանսական արդյունավետություն

Պետական ծախսեր

Ապահովագրական ծածկույթ

Խթանման կառուցվածք

4 Հայաստանում առողջապահության համակարգի զարգացման հիմնական լծակները

ARMENIA 2021-2041 ideas in action

Պակաս կարևոր ☐ ☐ ☐ Առավել կարևոր

	Հասանելիություն	Որակ	Խթաններ			
1 Առողջ ապրելակերպ	**Նախաձեռնություններ բնակչության շրջանում հիմնական վարքագծային ռիսկերի կրճատման համար** Երիտասարդների շրջանում ալկոհոլի օգտագործման վերահսկողություն		Առողջ սննդօգտագործման սովորությունների խթանմանն ուղղված օրենսդրական կարգավորումներ	**Առողջապա-հության պետական ծախսերի պատշաճ մակարդակ և կամավոր ապահովագ-րության բավարար ծածկույթ**	Սեփական միջոցների հաշվին կատարված ծախսերի և ոչ պաշտոնա-կան վճարում-ների օպտիմալա-ցում	Բուժաշխատ-ողների խրախուս-ման համակարգ
2 Կանխարգելիչ խնամք	**Բնակչության շրջանում անհատական կանխարգելման ծառայությունների վրա (սկրինինգ և պատվաստում) կենտրոնացում** Սկրինինգային ծրագրերի ընդգրկում ՀԱՓ-ում Նախապես ընտրված հիվանդությունների ներառում ՀԱՓ-ում	**Պոլիկլինիկաներում սկրինինգի ծառայությունների որակի ապահովում**	Մասնավոր հատվածի մասնակցություն կանխարգելիչ խնամքի զարգացմանը Իրազեկվածություն սկրինինգի ծրագրերի մասին			
3 Ախտորոշում	Ծախսերի փոխհատուցման պարզեցված ընթացակարգ **Հեռաբժշկությունը որպես գործիք հիմնական ախտորոշման և արտահիվանդանոցային բուժօգնության համար** **Կլինիկական լաբորատոր փորձարկման արդյունքների հուսալիություն** Ազգային էլեկտրոնային ԱԿՏՀ լայնամասշտաբ հարթակ	Բժիշկների ու բուժանձնակազմերի էլեկտրոնային առողջապահության կիրառման հմտություններ և մոտիվացիա	Օրենսդրական կարգավորման և որակի ապահովման շձևաչափ			
4 Թերապիա և բուժում	**Հավասար բաշխում Երևանի և շրջանների միջև.** • **Բժիշկների և բուժքույրերի** • **Հիվանդանոցների և մահճակալների** • **Շտապ օգնության** Բուժանձնակազմի բավարար քանակ Ընթացակարգեր և ենթակառուցվածք արագ փոխադրման համար	Մահճակալների օպտիմալ օգտագործում **Բուժման որակ** **Սարքավորումների որակը բուժհաստատություն-ներում** **Շրջաններում աշխատակազմի որակավորում**	**Բուժկրթության որակ**			
5 Երկարաժամկետ խնամք և ռեաբիլիտացիա	**Արտահիվանդանոցային և ստացիոնար վերականգնողական ծրագրեր** Դեղամիջոցների ներառում ՀԱՓ-ում		Կենտրոնացում վերականգնման և երկարատև խնամքի վրա			

1. Հայաստանի առողջապահական համակարգը կենտրոնացված է Արտոնությունների հիմնական փաթեթի (ԱՀՓ) ծրագրի վրա

4 Վեց ռազմավարական քայլեր առողջապահության ոլորտում, որոնք Հայաստանը պետք է հաշվի առնի

ARMENIA 2021-2041 ideas in action

Կարող է մեկնարկել մասնավոր հատվածի կողմից

		Լավագույն փորձ ունեցող երկրներ
Գերակա նախաձեռ-նություններ	Առողջ ապրելակերպի խթանում և աջակցում	
	Առաջնային խնամքի բարելավում	
	Արտոնությունների և ֆինանսավորման մոդելների վերանայում	
Ոլորտին բնորոշ խթաններ	Թվային խթանների զարգացում. էլեկտրոնային ԱԿՏՀ[1] և հեռաբուժություն	
	Կադրերի ստեղծման, զարգացման և տեղակայման բարելավում	
	Օրենսդրական կարգավորումների և ստանդարտների բարելավում	

1. Առողջապահության մասին էլեկտրոնային տեղեկությունների կառավարման համակարգեր

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ. Բարձր տեխնոլոգիաներ

Իրականացման ճանապարհային քարտեզ

2041 թվականի տեսլականը Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի համար.
Առանցքային տեխնոլոգիաների վրա հիմնված արտահանամետ արդյունաբերություն

ARMENIA 2021-2041 ideas in action

2017 **$0.5** → 2031 **$1.9** → 2041 **$10.2 մլրդ.** ՏՀՏ նպատակային արտահանում

31 → 127 հազ. անհրաժեշտ աշխատուժ

Համապարփակ սկզբունքներ

- Կենտրոնացում արտադրողականության աճի վրա բարձր ԱԱՀ-ով արտադրանքների և գործընթացների ավտոմատացման միջոցով
- Մշակել բիզնեսի գործառույթների համար հատուկ լուծումներ (ՄԳՏ, ՀՀՏ, ԳՏ)
- Կենտրոնացումը շեղել ցածր ծախսերով աութսորսինգի մոդելից՝ եկամուտները պահպանելու համար

Հիմնական ոլորտներ

- Հեռահաղորդակցություն և մեդիա
- Առողջապահություն
- Ֆինանսական ծառայություններ
- Ապահովագրություն
- Արդյունաբերություն և արտադրություն
- Էներգիա, ռեսուրսներ և կոմունալ ծառայություններ
- Մանրածախ առևտուր
- Պաշտպանություն
- Գյուղատնտեսություն

Հնարավոր թիրախային երկրներ

>40% գլոբալ ՏՀՏ ներմուծումների իրականացվում է 6 երկրների կողմից՝ հիմնականում տեղական ՏՏ ընկերությունների կողմից աութսորսինգի/աութսթաֆինգի ծառայությունների արդյունավետ օգտագործմամբ

Առանցքային տեխնոլոգիաներ

- Ընդլայնված վերլուծություն և AI լուծումներ
- AR/VR բիզնես հավելվածներ
- Կիսահաղորդիչների և ԻՀ (IoT) սարքերի դիզայն
- Ամպային հաշվարկային ծառայություններ

Դ Հայաստանի ԲՏ ոլորտի զարգացման ուղղությունը հասկանալու համար արժեքային շղթայում անհրաժեշտ է ուսումնասիրել բազմաթիվ ուղղություններ

ARMENIA 2021-2041 ideas in action

ԲՏ արժեքային շղթան

- Նոր վենչուրային ձեռնարկություն
- ՀԶ և արտադրանքի դիզայն
- Արտադրանքի մշակում և արտադրություն
- Արտադրանքի առևտրայնացում
- Բիզնեսի մասշտաբավորում

Ուղղություն-ները

1. Կադրեր և տաղանդներ

Ապահովել ԲՏ ոլորտում աշխատանքի ընդունված մարդկանց արդյունավետությունը, որակավորումը և փորձառությունը

2.Ենթակառուցվածք

Բարելավել առկա ենթակառուցվածքները (համացանցը) ԲՏ ոլորտում արտադրանքը խթանելու համար

3.Էկոհամակարգ

Ձևավորել իրավաբանական միջավայր ՏՏ ընկերությունների, համայնքների համար, գիտելիքների փոխանակման և աքսելերացման ծրագրեր, որոնք օժանդակում են սթարթափերի հիմնադրմանն ու զարգացմանը

4.Կապիտալ և ներդրումներ

Ընդլայնել պետական և մասնավոր կապիտալ ֆինանսների և ռեսուրսների հասանելիությունը նոր ձեռնարկության ստեղծման և զարգացման համար

Հայաստանում ԲՏ զարգացման խթանները

Պակաս կարևոր — Առավել կարևոր

	Նոր վենչուրային ձեռնարկություն	ՀՁ և արտադրանք ի դիզայն	Արտադրանքի դիզայն և արտադրություն	Արտադրանքի առևտրայնացում	Բիզնեսի մասշտաբավորում
1 Կադրեր և տաղանդներ	**Տեղական աշխատունակ բնակչություն. փոխհատուցումի ու արտոնությունների մշակում, որպեսզի SS ոլորտի կադրերն աշխատեն ներերկրային ընկերություններում**				
	Տեղական կադրերի որակավորումը ԳՏՃՄ (STEM) և բիզնես ոլորտներում				
	Միջազգային տաղանդների (ձեռնարկատերեր, մասնագետներ, փորձագետներ) ներգրավում բիզնեսների հիմնադրումն ու աճն արագացնելու համար				
2 Ենթակառուց-վածք	Ճանապարհներ և տրանսպորտ				
	Քաղաքային ենթակառուցվածք (բնակարան, սնունդ և ծառայություններ) Երևանում և հեռավոր վայրերում				
	Բջջային և մալուխային ինտերնետային ծածկույթ, որակ և հուսալիություն				
	Սթարթափ հաբեր. սարքեր և աշխատանքային տարածքներ, աքսելերացման և ինկուբացիոն ծրագրեր, քոուչինգ և մենթորություն				
3 Էկոհամակարգ	Սթարթափ կրթություն և կապերի ընդլայնման միջոցառումներ (networking)			Տեխնոլոգիական ճանապարհային ցուցահանդեսներ (roadshow) և առևտրային կոնֆերանսներ	
	Սթարթափ և ՓՄՁ օրենսդրություն, բիզնես հիմնելու և գործարարությամբ զբաղվելու դյուրինություն			Տեխնոլոգիական ընկերությունների իրավական շրջանակն ու հարկումը	
4 Կապիտալ և ներդրումներ	**Հետազոտության և տեխնոլոգիաների առևտրայնացման պետական ֆինանսավորում**		Առևտրային վարկերի հասանելիություն		
	Վենչուրային ընկերության և բիզնես հրեշտակներ (angel capital) կապիտալի հասանելիությունը ձեռնարկատերերին՝ հիմնականում պայմանավորված ՕՈՒՆ-ով				

Դ Հինգ ռազմավարական քայլեր բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որոնք Հայաստանը պետք է հաշվի առնի

ARMENIA 2021-2041 ideas in action

Լավագույն փորձ ունեցող երկրներ

Գերակա նախաձեռնություններ

Ընդլայնված վերլուծություններ/Արհեստական բանականության լուծումների մշակում առկա գիտելիքներն ու նոր կարողությունների կիրառման համար

Ցածրարժեք աութսորսինգից անցնում բարձր ավելացված արժեք ունեցող ծառայություններին աշխատանքի արտադրողականությունը և արժեքի ստեղծումը բարելավելու համար

ՀԶ-ի վրա պետական ծախսերի չափի ավելացում ներպետական (այդ թվում գյուղատնտեսական և անվտանգության) կարիքները հոգալու և եկամուտների հոսքերն ավելացնելու համար

Ոլորտին բնորոշ խթաններ

Ներդրումներ ԳՏՃՄ և ՀԳ խոշոր կրթական ծրագրերում (օրինակ՝ ուսուցիչների վերապատրաստում) համաշխարհային մակարդակի կադրեր պատրաստելու համար

Ներգրավում արտագաղթողներին

ենթակառուցվածքների և օրենսդրության միջոցով

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ. Զբոսաշրջություն

Իրականացման ճանապարհային քարտեզ

2041 թվականի տեսլականը Հայաստանի զբոսաշրջության ոլորտի համար. Համաշխարհային կարգի զբոսաշրջային ուղղություն՝ թիրախային սեգմենտների համար եզակի փորձառություններով

ARMENIA 2021-2041 ideas in action

2018	2031	2041	
$1.4 →	$5 →	$11.5 մլրդ.	Զբոսաշրջության տարեկան եկամուտը մինչև 2041 թվականը

	2031	2041	
	120 →	270 հազ.	Անհրաժեշտ աշխատուժ
	1.7 →	14 մլն.	Ժամանումներ

Միջազգայնորեն ցանկալի ուղղություն

Տարածում նոր և առկա շուկաներում, կենտրոնանալով հետևյալ ուղղությունների վրա՝

- Չինաստան և Հարավարևելյան Ասիա
- Պարսից ծոցի երկրներ
- Եվրոպական խոշոր տնտեսություններ
- Ռուսաստան

Համաշխարհային կարգի զբոսաշրջային ենթակառուցվածք և կապ

Անխափան կապ երկրի խոշոր զբոսաշրջային վայրերի միջև

- Ավելի շատ ուղիղ չվերթներ դեպի Հայաստան և Հայաստանից դուրս
- Անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց
- Հյուրանոցային համարների առավել ընդարձակ ֆոնդ

Եզակի փորձառություններ

Ֆիրմային և եզակի փորձառություններ

- Մշակութային զբոսաշրջություն
- Էկոզբոսաշրջություն
- Կրոնական զբոսաշրջություն
- Արկածային զբոսաշրջություն

Ե Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացումը հասկանալու համար արժեքային շղթայում անհրաժեշտ է ուսումնասիրել բազմաթիվ ուղղություններ

ARMENIA 2021-2041 ideas in action

Զբոսաշրջության արժեքային շղթան

1 Իրազեկվածություն և ուշադրություն	2 Ճամփորդություն և մուտք	3 Զբոսաշրջային օբյեկտներ և կեցություն	4 Այցելություն տեսարժան վայրեր	5 Ծառայություններ և փորձառություններ

Ուղղություններ

Կադրեր և տաղանդներ

Ապահովել զբոսաշրջության ոլորտում աշխատանքի ընդունված մարդկանց արդյունավետությունը, որակավորումը և փորձառությունը

Ենթակառուց-վածք

Ընդլայնել առկա ենթակառուցվածքները (ճանապարհները, տրոնսպորտը, կացարանները)՝ զբոսաշրջության ոլորտում արդյունքն ավելացնելու համար

Շրջակա միջավայր

Ձևավորել իրավական միջավայր և փորձի փոխանակման համայնքներ՝ զբոսաշրջությունը խթանելու համար

Տեղեկություն և մարքեթինգ

Ամրապնդել Հայաստանի ներկայությունը միջազգային լրատվամիջոցներում՝ հատկապես առցանց, զբոսաշրջության ոլորտում հետաքրքրությունը շարժելու համար

Կառավարություն

Ապահովել կառավարության կողմից առանցքային ազգային ծառայությունների (օրինակ՝ մուտքի թույլտվություններ, անվտանգություն) տրամադրումը զբոսաշրջությունը խթանելու համար

Զբոսաշրջության զարգացման խթանները Հայաստանում

Պակաս կարևոր | Առավել կարևոր

	Մարդիկ և կադրեր	Ենթակառուցվածք	Շրջակա միջավայր	Տեղեկություններ և մարքեթինգ	Կառավարություն
1 Իրազեկվածություն և ուշադրություն			Բնական և մշակութային ռեսուրսներ	**Սոցիալական լրատվամիջոցների առկայություն** **Մարքեթինգ և գովազդ**	Վիզայի մուտքի ռեժիմ Անվտանգություն
2 Ճամփորություն և մուտք	**Անգլերենի, ռուսերենի ու չինարենի տիրապետում հյուրանոցային և ռեստորանային (HoReCa) ոլորտներում**	**Ուղիղ չվերթներ**			
3 Զբոսաշրջային օբյեկտներ և կեցություն		Հյուրանոցային և կեցության օբյեկտներ Ռեստորաններ Քաղաքային տրանսպորտ			
4 Այցելություն տեսարժան վայրեր		**Ճանապարհներ** **Միջքաղաքային փոխադրումներ**		Տեղեկություն-ների հասանելիու-թյուն Տուրերի և ծառայություն-ների գովազդ	
5 Ծառայություններ և փորձառություններ					

Ե Վեց ռազմավարական քայլեր զբոսաշրջության ոլորտում, որոնք Հայաստանը պետք է հաշվի առնի

ARMENIA 2021-2041 ideas in action

Գերակա նախաձեռ-նություններ

Դառնալ ցանկալի ուղղություն չինացի զբոսաշրջիկների համար բարելավված հասանելիության և խթանման կենտրոնացված ջանքերի (օրինակ՝ չինարենով գրված կոնտենտի) միջոցով

Սոցիալական մեդիայի հետ կապված ռազմավարության իրականացում՝ ստեղծելով ավելի մեծ հետաքրքրություն գրավիչ տեսողական կոնտենտի և այն զբոսաշրջիկների կողմից տարածման միջոցով (օրինակ՝ Instagram-ով, YouTube-ով)

Յուրահատուկ արկածային փորձառությունների ստեղծում (օրինակ՝ պարապլան, զիփլայն, օֆֆ-ռոուդ) 1980 թվականից հետո ծնված (millennials) զբոսաշրջիկներին ներգրավելու համար

Ոլորտին բնորոշ խթաններ

Կրոնական զբոսաշրջության հնարավորությունների խթանում մշակութային և կրոնական շարժառիթներով ճամփորդողների համար (օրինակ՝ Ռուսաստանից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից)

Ճանապարհային և տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում ավելի երկար կեցությունն ապահովելու և ներքին զբոսաշրջությունը խթանելու համար

Լեզվի իմացության խթանում (օրինակ՝ անգլերենն ու չինարենը)՝ սպասարկման որակը բարելավելու համար

Բովանդակություն

Ներկա իրավիճակի վերաբերյալ ակնարկ և մոտեցում

Գերակա ոլորտներ. Զբոսաշրջություն

Իրականացման ճանապարհային քարտեզ

Հաջողության տասը գործոններ, որոնք պետք է հաշվի առնել երկրի վերափոխման ճանապարհորդության ընթացքում

ARMENIA 2021-2041 ideas in action

Գործողությունների և ռեսուրսների մանրամասն պլանների ստեղծման շահագրգիռ կողմերի մասնակցային գործընթաց

Գերակայություններ ու արդյունքներ 1

Լաբորատորիաներ 2

Ճիշտ փորձաքննությամբ առանձնացված հատուկ նշանակության ուժեր (օրինակ՝ ցանցից)՝ հստակ թեմաներին անդրադառնալու համար

Բյուջե 3

Բյուջեն և դրա տեղաբաշխումը, վերահսկողության թափանցիկ մեխանիզմներ ռեսուրսների տեղաբաշխման համար

Հանրային կարծիք 4

Հանրային կարծիքի հավաքագրման գործիքներ և մեխանիզմներ որոշումների կայացման և հաշվետվողականության մշակման համար

Ճանապարհային քարտեզ 5

Իրականացման ենթակա գործողությունների մանրամասն պլան

Առաքման միավոր 6

Մարմին, որն ունի որոշումներ կայացնելու լիազորություն և պատասխանատվություն, օգտագործում է հասանելի ռեսուրսներ (այդ թվում ցանցը), սահմանում է ռիթմիկ հաջորդականություն և համակարգում է իրականացումը

Կատարողականի կառավարում և խնդիրների լուծում 7

Ապահովել նպատակների և պատասխանատվության իրագործման թափանցիկ համակարգ

Հնարավորություն-ների ստեղծում 8

Հատուկ հաստատություններ (ակադեմիաներ, հաստատություններ և այլն)՝ անհրաժեշտ կարողությունները զարգացնելու համար

Արդյունքի հաղորդում 9

Հստակ և գրավիչ հաղորդակցություն հաջողությունների և իրականացման արդյունքում քաղած դասերի մասին

Իրականացման ինստիտուցիոնալացում 10

Բեկումնային ազդեցությունը սահմանել որպես նորմ

Բարձր արդյունավետությամբ առաքման համակարգի ստեղծում, որը պլանները վերածում է արդյունքների

Հայկական սփյուռքը կարող է առանցքային դեր խաղալ տրանսֆորմացիայի ճանապարհի բոլոր փուլերում

ARMENIA 2021-2041 ideas in action

Մակարդակ	Տեսակ		Նկարագրություն	Օրինակներ՝ Ոչ սպառիչ
Միջազգային մակարդակ	Շահերի պաշտպանություն	1	Ստեղծել կայուն համակարգ, որը խթանում է Հայաստանի շահերը համաշխարհային կազմակերպություններում և այլ երկրներում	
	Կրթաթոշակներ	2	Արդյունավետ դարձնել խոշոր միջազգային հաստատություններում համալսարանների և ազգային ինստիտուտների հետազոտողների և ակադեմիկոսների կարճաժամկետ (1-3 ամիս) և երկարաժամկետ (1-5 ամիս) կրթաթոշակների և փոխանակման ծրագրերի իրականացումը	
	Փոխկապակցվածություն	3	Սփյուռքի օժանդակությամբ ստեղծել և զարգացնել կոնտակտային ցանց փորձառու օտարերկրյա մասնագետների և հայկական արդյունաբերության միջև	
	Միջազգային գովազդ	4	Ստեղծել կադրերի և ռազմավարական նոու-հաուի ներգրավման համար պատասխանատու ազգային գործակալություն՝ Հայաստանի դիրքերը միջազգային մակարդակում բարելավելու և ներգաղթը հեշտացնելու նպատակով՝ որպես միակ կոնտակտային կետ ծառայելու համար	
Ազգային մակարդակ	Բարեգործություն	5	Կազմակերպել ազգային բարեգործական հիմնադրամի ստեղծումը, որը նպաստում է Հայաստանի ներսում դրսից ստացված ֆինանսական օժանդակությամբ սոցիալական գաղափարների զարգացմանը	
	ՕՈՒՆ ներգրավում	6	Խրախուսել հատուկ տնտեսական գոտիների և արդյունաբերական պարկերի ստեղծումը՝ սփյուռքի ներդրողներին ներգրավելու համար, որոնք մշակում են ընկերությունների էկոհամակարգը և նպաստում են կադրերի ներգրավմանը, պահպանմանն ու ուսուցմանը	
	Սփյուռքի պարտատոմսեր	7	Խթանել պարտատոմսերի թողարկումն ու վաճառքը բացառապես հայկական սփյուռքի անդամներին	
	Քաղաքականության ներգրավում	8	Գնահատել և նպաստել արդար պետական քաղաքականության մշակմանը՝ սփյուռքի անդամներին թույլ տալով մասնակցություն ունենալ ազգաշինության քաղաքականության մեջ	
Խմբակային/ անհատական	Զանազան գործողություններ	9	Նախաձեռնել և/կամ նպաստել տեղական տնային տնտեսությունների կամ կոնկրետ նախագծերի զարգացմանը	

Գերակա ոլորտներում առկա են մի քանի նախաձեռնություններ, որոնք կարող են մեկնարկել եկող 5 տարիների ընթացքում՝ մակրոտնտեսական գործոնների աջակցությամբ

ARMENIA 2021-2041 ideas in action

Ղեկավարվում են՝ 1. Կառավարություն 2. Մասնավոր հատված 3. ՄՖԿ-ներ/ՀԿ-ներ 4. Սփյուռք

Գերակա ոլորտներ

Գերակա նախաձեռնությունները

Գյուղատնտեսություն

Վերամշակել ցանքատարածությունները. ընդլայնել հողօգտագործումը համախմբման արտոնությունների միջոցով՝ արտադրությունը խթանելու համար

Կենտրոնացում կարևոր արտադրանքների արտադրության վրա. ապահովել ինքնաբավությունը և պարենային անվտանգությունը (օրինակ՝ հացահատիկի, կերերի, կենդանական սպիտակուցների համար)

Արտահանման ընդլայնում. մրգի, ծխախոտային արտադրանքների և գինու նպատակային արտահանումը թիրախային երկրներ (օրինակ՝ Ռուսաստան, Ուկրաինա, ՄԱԷ, Սաուդյան Արաբիա)

Կրթություն

Ուսուցիչների և դպրոցի ղեկավարության զարգացում կրթության որակը բարելավելու համար

Մ-12-ում գերազանցության կենտրոնների ստեղծում տաղանդավոր ուսանողների և ուսուցիչների համար

Կրթության համապատասխանեցումն աշխատաշուկայի ապագա կարիքներին (այդ թվում ԳՏԵՄ-ին)

Վաղ մանկական տարիքում կրթության ընդլայնումը լավագույն մեկնարկը երաշխավորելու համար

Ողջ կյանքի ուսումնառության ծրագրերի ընդլայնում մասնագիտական որակավորման բարձրացման և վերապատրաստման համար

Առողջապահություն

Առողջ ապրելակերպի խթանում և աջակցում՝ ՈՎՀ-ների հանգեցնող հիմնական վարքագծային ռիսկերի մեղմացման համար

Առաջնային խնամքի բարելավումը որպես առաջին հասանելի կոնտակտային կետ և արդյունավետ բուժում

Արտոնությունների և ֆինանսավորման մոդելների վերանայում Հայաստանի համար ամենաարդյունավետ և օգտակար առողջապահական մոդելները սահմանելու համար

Բարձր տեխնոլոգիաներ

Մշակել ընդլայնված վերլուծություններ/Արհեստական բանականության լուծումներ առկա գիտելիքներն ու կարողությունների կիրառման համար

Ցածրաարժեք առթսորսինգից անցնել հարմարեցված բարձր ավելացված արժեք ունեցող ծառայություններին աշխատանքի արտադրողականությունը բարելավելու և տնտեսությունը ԲԿ-ի ընդլայնումից պաշտպանելու համար

ՀԶ-ի վրա պետական ծախսերի չափի ավելացում ներպետական (այդ թվում գյուղատնտեսական և անվտանգության) կարիքները հոգալու և եկամուտների հոսքն ավելացնելու համար

Զբոսաշրջություն

Դառնալ ցանկալի ուղղություն չինացի զբոսաշրջիկների համար ուղիղ չվերթների և չինարենով գրված կոնտենտի միջոցով

Իրականացնել սոցիալական մեդիայի հետ կապված ռազմավարությունը ստեղծելով ավելի մեծ հետաքրքրություն գրավիչ տեսողական կոնտենտի և այն զբոսաշրջիկների հետ կիսելու միջոցով

Ստեղծել յուրահատուկ արկածային փորձառություններ 1980 թվականից հետո ծնված զբոսաշրջիկներին ներգրավելու համար

Կրոնական զբոսաշրջության հնարավորությունների խթանում մշակութային և կրոնական շարժառիթներով ճամփորդողների համար (օրինակ՝ Ռուսաստանից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից)

Ոլորտին բնորոշ խթաններ

Առաջադեմ սերմերի և գյուղտեխնոլոգիայի օգտագործում

Գյուղատնտեսական հաբերի ստեղծում հողագործներին կրթելու և օգնելու համար

Ողջ երկրի տարածքում ոռոգման համակարգերի ստեղծում

Թվային խթանների և հեռավար ուսուցման զարգացում՝ հավասար հասանելիության և օժանդակ ոլորտի աճի ապահովման համար

Մեծացնել կրթության ոլորտում կարիերայի գրավչությունը ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքների կիրառմամբ և՛ ֆինանսական և՛ ոչ ֆինանսական լծակներով

Թվային խթանների զարգացում (էլեկտրոնային ԱԿՏՀ և հեռաբուժություն)

Կադրերի ստեղծման և զարգացման բարելավում

Օրենսդրական կարգավորումների և ստանդարտների բարելավում

ԳՏԵՄ և ՀԳ որակյալ կրթություն համաշխարհային կարգի կադրեր պատրաստելու համար

Ներգրավում արտագաղթողներին ենթակառուցվածքների և օրենսդրության միջոցով և օրենսդրության միջոցով

Ճանապարհների և տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացում ավելի երկար կեցությունն ապահովելու և ներքին զբոսաշրջությունը խթանելու համար

Լեզվի իմացության խթանում (անգերեն և չինարեն) սպասարկման որակը բարելավելու համար

Նախաձեռնությունների իրականացմանը կարող են նպաստել մակրոտնտեսական խթանները

Կարգավորում և օրենսդրություն
Սահմանել օրենսդրական օրակարգը **թիրախավորված գործողությունների խթանման** նպատակով

Ստանդարտներ և համաձայնագրեր
Մշակել **միջազգային առևտրային գործարքներ**, ապահովել **անվտանգության բարձր ստանդարտները** և համապատասխան **լիցենզավորումը՝ միջազգային ստանդարտների որդեգրմամբ**

Մարդկային կապիտալ
Կրթության, առողջապահության և ընդհանուր կենսապայմանների աստիճանական բարելավում՝ մարդկային կապիտալի որակը և քանակը բարձրացնելու համար

Պետական կառավարում
Հանրային ոլորտում տարածել **բարեփոխումները** և **բարձր արտադրողականության մտածելակերպ**, այդ թվում **համազգային թվայնացումը և** հակակոռուպցիոն գործողությունները

Ենթակառուցվածքներ
Մշակել ենթակառուցվածքների առանցքային տեսակներ ոլորտային կարիքների համաձայն (էներգիա, տրանսպորտ և ճանապարհներ, ջուր և հաղորդակցություն)

Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը
Հեշտացնել առանցքային բիզնես գործընթացները (օրինակ՝ մեկ պատուհան) և **աջակցել ՓՄՁ-ներին** կապիտալի, կադրերի և շուկաների հասանելիության գործում

Ներդրումների խթանում
Ապահովել **ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը** հատուկ հաստատության օգնությամբ ՕՈՒՆ-ի ներգրավման և ՏՓՆ-ի խթանման միջոցով

Արտահանման խթանում
Խաչաձև միջոցներ **արտահանումը և երկրի բրենդը գովազդելու և զարգացնելու համար** (օրինակ՝ արտահանման գովազդային գործակալություն)

Կայուն, երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է համագործակցություն կառավարության, սփյուռքի և բիզնեսների միջև

Հայաստանի ՀՆԱ մեկ շնչի հաշվով ԳՊ , հաստատուն ԱՄՆ հազ. դոլար 2017



2031Թ. ՏԵՍԼԱԿԱՆ

10% աճի p.a.

Հետևողական քաղաքականության, նախաձեռնությունների կենտրոնացված իրականացման և սերտ համագործակցության միջոցով Հայաստանը կարող է դառնալ միջինից բարձր եկամուտ ապահովող երկիր, ինչպես օրինակ՝ Էստոնիան, Չեխիան կամ Իսրայելը

1. Միջին եկամուտ

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, 2020 թվականի տվյալները Հայաստանի կանխատեսումն են 2021 թվականի փետրվարի դրությամբ